Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
օգոստոսի 26-ի N 492 - Ա
որոշման

«ԱՐՁԱԳԱՆՔ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել կարկտահարությունից տուժած համայնքներում կենսապայմանների վերականգնմանը և ամրապնդմանը՝ սոցիալական և մարդասիրական աջակցության տրամադրման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզ ք. Գյումրի,՝ Սոցիալական՝ հումանիտար օգնության տրամադրում
6.	Ծրագրի բյուջեն	132,688,587 դրամ (259,504.30 Շվեյցարական ֆրանկ)
7.	Բարեգործություն ստացողը	Սույն թվականի հուլիսի 13-ին Գյումրիում տեղի ունեցած կարկտահարությունից տուժած առավել խոցելի 600 ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արձագանքել կարկտահարությունից առավել տուժած 600 ընտանիքների սոցիալական խնդիրներին՝ մասնավորապես՝

	միջոցների ծավալը	տրամադրել անվերապահ/բազմանպատակ օգտագործման դրամային աջակցություն և անկողնային պարագաներ՝ աղետից առավել տուժած 400 ընտանիքներին, ինչպես նաև 200 առավել խոցելիների ընտանիքներին տրամադրել հագուստի աջակցություն վաուչերների տեսքով: Ծրագրի գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Հումանիտար աջակցության տրամադրում կարկտահարությունից առավել տուժած 400 ընտանիքներին՝ անվերապահ դրամային օժանդակության միջոցով (բյուջե՝ 40,761,859 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2020 թ. – 30.11.2020 թ.) 2. Հումանիտար աջակցության տրամադրում կարկտահարությունից առավել տուժած 400 ընտանիքներին՝ անկողնային պարագաների տրամադրման միջոցով (բյուջե՝ 46,017,000 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2020 թ. - 30.11.2020 թ.) 3. Հումանիտար աջակցության տրամադրում կարկտահարությունից առավել տուժած 200 ընտանիքներին՝ հագուստի ձեռք բերման համար վաուչերների տրամադրման միջոցով (բյուջե՝ 41,943,115 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2020 թ. – 30.11.2020 թ.) 4. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 3,966,613 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, և գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, բենզինի, մեքենայի սպասարկման, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռք բերում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Հագուստի վաուչերների ձեռք բերում աղետից տուժած առավել խոցելի 200 (870 անձ) ընտանիքների համար՝ 41,943,115 դրամ արժողությամբ 2. Անկողնային պարագաների(դոշակ, բարձ, վերմակ, սպիտակեղեն, և այլն) ձեռք բերում աղետից առավել տուժած 400 ընտանիքների (1800 անձ) համար՝ 46,017,000

		դրամ արժողությամբ: 3. Բեռնատար մեքենաների վարձակալության և բեռնափոխադրման ծառայություններ՝ անկողնային պարագաների բաշխման համար՝ 332,345 դրամ արժողությամբ 4. ՀԿԽԸ մեքենաների բենզին և սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 511,300 դրամ արժողությամբ: 5. Գրենական պիտույքների ձեռքբերում՝ 182,073 դրամ արժողությամբ 6. Կոմունալ ծառայությունների և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռքբերում 819,000 դրամ արժողությամբ 7. Լուսաբանման նյութերի՝ այդ թվում տեսահոլովակների պատրաստման ծառայությունների ձեռքբերում՝ 461,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 3,966,613 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 1,661,725 դրամ արժողությամբ, գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռք բերման ծախսերը՝ 1,001,073 դրամ արժողությամբ, ծրագրի լուսաբանման նպատակով նախատեսված ծախսերը՝ 460,170 դրամ, մեքենաների պահպամման ծախսեր՝ 511,300 դրամ և մեքենաների վարձակալության և բեռանփոխադրման ծախսեր 332,345 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարանի, Գյումրի քաղաքապետարանի, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում, իրականացվելու է արտաքին աուդիտ: Նաև ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 16 N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ